ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-03 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքում 2016թ-ի մարտի 01-ին կնքված ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-03-18 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2016թ-ի մարտի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ : Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրի հավելված 1 հանդիսացող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Ծառայությունների մատուցման ժամկետի փոփոխություն:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 7.3 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Մ.Հայրապետյանին:

Հեռախոս՝ 511 787:

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

01.03.2016 թվականին կնքված N <<ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-03-18>>
պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան **<<22>> մարտի 2016թ.**

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Ռ. Յիրիկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), երկուսը միասին՝ այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 01.03.2016 թ. կնքված N **<<ԴԴ-ՇՀԾՁԲ-15/1-03-18>>** պետական գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.3 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի թիվ 1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ծառայությունների մատուցման ժամկետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ <<Ծառայության մատուցումն իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ>>:

2. Այլ պայմաններ

2.1 *Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի* Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Արգիշտի 4/1
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01551651
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 2470113333300000
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
Ղեկավար Կ. Փոլադյան	Գլխավոր տնօրեն Ռ. Յիրիկյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.